



ԵՐԿՐԻՑԱԲԹԻ, 9 ՄԱՐՏ, 2026

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս լիս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

#### ՇԱՐՄԱՆ

*Նայեաց սիրով, Հայրդ գթած, Ի քո ստեղծեալ գործս ձեռաց.*

*Եւ զբանակս Հրեշտակաց, Տուր պաշտպան մեզ սկարացս,*

*Փրկեա զանձինս ի փորձանաց, Ի խաւարի շրջող դիւաց.*

*Ձի ի սուղնջեան եւ գիշերի, Տացուք քեզ փառս անլուելի:*

*Էին անեղ, անակզբան՝ ծնունդ անճառ Որդի եւ Բան.*

*Որ արարեր զսիւ գործոյ եւ զգիշեր ի Հանգիստ քնոյ.*

*Տուր ի ննջել՝ աչաց մարմնոյ, արթուն լինել մեզ ըստ Հոգւոյ.*

*Ձի ի սուղնջեան եւ գիշերի տացուք քեզ փառս անլուելի:*

*Բաբուն Հոգւոյ բանաւորաց, աղբիւր լուսոյ, բաշխող շնորհաց.*

*Ի փակիլ դրանց բնութեանց մարմնոյ, ըյս սուր աչաց սրտից մերոց.*

*Ի գիշերաց առ քեզ կանխել, ընդ Հրեղինացն օրհնաբանել.*

*Ձի ի սուղնջեան եւ գիշերի տացուք քեզ փառս անլուելի:*

#### ԱՊՈԹՔ

Բարիքներ պարգեւող, առատաձեռն Աստուած, կ'աղաչենք մեր հոգիներէն փարատ մշուշոտ եւ խաւարային խորհուրդները: Չարին թելադրած պատրանքներէն հեռու պահէ մեզ, եւ շնորհէ՝ որ հաւատով ապաւինինք ամենասուրբ Երրորդութեանդ՝ Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին. այժմ՝ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

#### ՇԱՐՄԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

*Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայրնեցար փառս մեր, ողորմեա մեզ:*

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուած-ձաճնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

#### ՇԱՐՄԱՆ - ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*

*Սմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:*

*Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:*

*Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:*

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի պուէ եւ ի գիշերի,  
ի նաքիլ ի փան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

## **ՍԱՂՄՈՍ 101** **ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՐԳԱԾ ԹԱԳԱԻՈՐԸ**

**Ք**ու սիրոյդ եւ արդարադատութեանդ մասին պիտի երգեմ,  
ով Տէր, երգով պիտի ներբողեմ Քեզ:

Կ'ուզեմ անբիծ կեանք մը ապրիլ, ե՞րբ պիտի գաս դուն ինձի,  
կ'ուզեմ անարատ սրտով ապրիլ շրջապատիս մէջ:

Զեմ ուզեր տեսնել ոեւէ անիրաւութիւն.

կ'ատեմ գործերը անոնց՝ որոնք կ'ուրանան իրենց հաւատքը.

այնպիսիները ինձի հետ կապակցութիւն պիտի չունենան:

Նենգաւոր մարդիկ ինձմէ հեռու պիտի մնան,

իսկ չարերը նանչնալ իսկ պիտի չուզեմ:

Պիտի բնաջնջեմ անոնք՝ որոնք գաղտնաբար ուրիշները կը  
գրպարտեն.

եւ պիտի չհանդուրժեմ անոնք՝

որոնք ուրիշները կ'արհամարհեն ամբարտաւան սրտով:

Աչքս պիտի չկտրեմ հաւատացեալ մարդոցմէ, որոնք ինձի հետ  
պիտի բնակին.

ամբիծ կեանքով ապրողներն են որ ինձի պիտի ծառայեն:

Իմ տանս մէջ խաբեքան տեղ պիտի չունենայ,

ստախօսը իմ դիմացս պիտի չկանգնի:

Օրը օրին ես պիտի բնաջնջեմ երկրին բոլոր ամբարիշտները,

Տիրոջ ֆաղափէն ընդմիշտ վտարելով բոլոր անօրէնութիւն  
գործողները:

## ՕՐՈՒԲԱՆ ՆԻԻԹԸ



ՍԱՂՄՈՍ 101

### ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՐԳԱԾ ԹԱԳԱԲՈՐԸ

Կը վերադառնանք Դաւիթի ժողովածուէն քաղուած Սաղմոսներուն: Վերանագիրը այս Սաղմոսին՝ Աստուծոյ կարգած թագաւորը: Հեղափոխական Սաղմոս մըն է, երեւի համեմատելով այսօրուան այն երեւոյթին հետ, երբ ընտրութեան կամ նշանակումի ճամբով ղեկավարներ կը նստին գահին, աթոռին, իրենց երդումը կամ հաւատարմութիւնն է, որ կը յայտարարեն, թէ ինչպիսի քաղաքականութիւն պիտի վառէ ի նպաստ երկրին եւ ժողովուրդին: Այսպէս եւս Աստուծոյ թագաւոր մըն է որ նշանակած է, ի փար-բերութիւն Սաւուղ թագաւորին: Որովհետեւ Սաւուղ Աստուծոյ կամքին համաձայն թագաւոր չեղաւ, որուն համար ալ Աստուծոյ ուզեց Իսրայէլի համար ուրիշ թագաւոր մը նշանակել, Դաւիթը: Ամբողջ Սաղմոսը կը ներկայացնէ թէ ինչպիսիս պէտք է ըլլայ Աստուծոյ նշանակած թագաւորը: Ամբիժ կեանք ապրող եւ անարատ սիրտ ունեցող: Այս վիճակը նաեւ փեսաներու պալատին մէջ, իր շուրջ եղող պալատականները, խորհրդականները, նախարարները: Առաջին իսկ առիթով, Դաւիթ կը յայտարարէ, որ պիտի երգէ, խօսի, վկայէ Աստուծոյ սիրտն եւ արդարադատութեան մասին: Թէ ինչպիսիս է Աստուծոյ սերը եւ Անոր արդարադատութիւնը: Սէր մը, որուն մէջ կայ ողորմութիւն, որովհետեւ Աստուծոյ ողորմութիւնը հանդէպ մարդուն, մանաւանդ՝ անկեալ, մեղքի մէջ իյնկած մարդուն, Իր սիրտ արտայայտութիւնն է: Առիթով մը Յիսուս Քրիստոս պիտի ըսէր Նիկողիմոսին, "Աստուծոյ այնքան սիրեց աշխարհը, մարդը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին փոխաւ": Իսկ Աստուծոյ արդարադատութիւնը, բոլոր անոնց որոնք արդարութիւն կը փնտռեն: Այս յայտարարութիւնը ընելէ յետոյ, Դաւիթը կը ներկայացնէ, թէ իբրեւ թագաւոր Աստուծոյ ժողովուրդին, կ'ուզէ անբիժ կեանք մը ապրիլ, անարատ, մաքուր սրտով, իր փան մէջ, նաեւ կը նշանակէ իր ներաշխարհին մէջ, եւ ըստ այնմ կը հրահարէ, որ Աստուծոյ գայ եւ բնակի: Երանի սրտով մաքուրներուն, որովհետեւ զԱստուծոյ պիտի փնտռեն: Որովհետեւ Աստուծոյ կը բնակի հոգիներու մէջ, պայմանաւ որ այդ հոգիներն ալ ըլլան անբիժ ու անարատ: Այս երեւոյթը կը յիշեցնէ Քրիստոսի փառաբանումը եւ մաքրագործումը: Այդ առիթով է որ Քրիստոս կը յայտարարէ, որ "Իմ փունս աղօթքի փունս է": Դաւիթ կը յայտարարէ, որ չուզէր փեսանէ ունէ անհրաւորութիւն, կ'ատէ բոլոր այն գործերը որոնք իրենց հաւատքը կ'ուրանան: Ընդհանրապէս այդպիսիներուն հետ կապ չուզէր ունենալ: Նենգաւոր մարդիկ իրմէ հեռու, նոյնիսկ չուզէր ճանչնալ, ծանօթանալ չարերը: Նոյնիսկ պար-բաստ է բնաջնջելու բոլոր անոնք՝ որոնք գաղտնաբար ուրիշները կը գրպարարեն, կամ ուրիշները արհամար-հող իրենց ամբարտաւան սրտով: Այս բոլորի փոխարէն, Դաւիթի հայեացքը հաւատարմեաց մարդոց, իր հետ բնակող, անբիժ կեանքով ապրողներ: Խաբեքայի ներկայութիւնը ընդհանրապէս փե պիտի չունենայ իր փան մէջ: Ան նաեւ կը խոստանայ Տիրոջ քաղաքէն վարելու բոլոր անօրէնութիւն գործողները: Այս բոլորը ընելու համար, նախ սկսելու իր փունէն, այսինքն՝ իր ներաշխարհէն: Անոր համար ալ կ'ուզէ անբիժ ու անարատ կեանքով ապրիլ: Կոչ մեզմէ իւրաքանչիւրին այսպիսի կեանքով ապրելու: